

ՀՆՉԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԸՍԲՈՆՈՒՄՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ս. Վ. ՂԱԿԱՍՅԱՆ

Հնչերանգը չափազանց բարդ երևույթ է, որի հետազոտումը լեզվաբաններին կանգնեցրել է շատ դժվարին կացության առջև: Դժվարություն են հարուցում հատկապես հնչերանգի մեջ մտնող բաղադրիչների որոշման, հնչերանգի տարբեր գործառնությունները պարզելու, հնչերանգի և շարահյուսության փոխհարաբերության, հնչերանգային կառույցների համակարգման և զանազան այլ հարցեր: Հնչերանգի ուսումնասիրությունը որքան դժվար է, նույնքան էլ կարևոր և հետաքրքիր, որովհետև տարբեր լեզուներ ունեն տարբեր հնչերանգային յուրահատկություններ: Գործը ավելի է բարդանում, երբ առնչվում ենք այլ լեզուների հետ (չինարեն, տաի, էվե և այլն), ուր միևնույն ֆիզիկական հատկությունները՝ հիմնական տոնը, ուժգնությունը և տևողությունը ծառայում են ինչպես հաղորդակցային, քերականական ու զգայական, այնպես էլ բառային իմաստների տարբերակմանը:

Լեզվաբանական հետազոտություններում հնչերանգի ուսումնասիրությունը գնալով ավելի ու ավելի կարևոր է դառնում և շատ լեզվաբանների ուշադրություն է բևեռում իր վրա: Պատճառը թերևս այն է, որ լեզվական շատ երևույթների մեկնաբանությունը և պարզաբանումը անհնար է առաջ տանել՝ առանց դիմելու հնչերանգի օգնությանը:

Ժամանակակից գիտության տեսակետից հնչերանգի հետազոտումը կարևոր է ոչ միայն լեզվաբանության, այլև ուրիշ գիտաճյուղերի համար՝ կապի և ինֆորմացիաների տեսության, հոգեբանության, հանրաբանության, կիրեռնետիկայի, ֆիզիկայի և այլն: Այս տեսակետից հարց է առաջանում. արդյո՞ք հնչերանգը պետք է ուսումնասիրվի լեզվաբանության մեջ՝ որպես առանձին բաղադրիչ, և ինչ մոտեցում է հարկավոր ցուցաբերել այդ բաղադրիչի նկատմամբ. արդյո՞ք անհրաժեշտ է նրա ուսումնասիրությունը կապել նախադասության կառուցվածքի հետ, թե հարկավոր է այլ կերպ վարվել: Հասկանալի է, որ եթե լեզվաբանությունը պետք է զբաղվի այս երևույթի ուսումնասիրությամբ, ապա այս չի նշանակում, որ այն ամբողջությամբ պետք է այդ բեռը իր վրա վերցնի: Մյուս գիտաճյուղերը, բնականաբար, նույնպես պետք է զբաղվեն հնչերանգի ուսումնասիրությամբ՝ իրենց անհրաժեշտ խնդիրների պատասխանը գտնելու համար: Հնչերանգի մասն ուսումնասիրությունը օգտակար է, որովհետև այդ գիտաճյուղերը կարող են միմյանցից տվյալներ, արդյունքներ վերցնել և այդ կերպ ավելի հիմնավոր ու բազմակողմանի առաջ տանել հնչերանգի ուսումնասիրությունը: Վերջին տասնամյակներում հնչերանգի նկատմամբ ունեցած բուռն հետաքրքրությունը բացատրվում է կառուցվածքային և փոխակերպական քերականությունների, հատկապես սերող հնչույթաբանության առաջացմամբ ու զարգացմամբ: Սերող հնչույթաբանները անհրաժեշտություն զգացին իրենց ուսումնասիրություններում օգտագործելու նախորդ շրջանում կուտակված հնչերանգի հետազոտությունից ստացված արդյունքները: Սակայն պարզվեց, որ այդ արդյունքներից օգտվելը այնքան էլ հեշտ գործ չէ: Հիմնական անհանգստությունը վերաբերում էր այդ արդյունքների ճշտությանը, և մի տեսակ թերահավատություն առաջացավ լեզվաբանների մեջ: Բանն այն է, որ հնչերանգով զբաղվող տարբեր լեզվաբանների և ուսումնասիրության մեթոդները, և երևույթի նկատմամբ ունեցած պատկերացումներն ու մոտեցումները, և ստացված արդյունքները միանգամայն տարբեր են մեկը մյուսից:

Նույնիսկ չկա հնչերանգի արտահայտման, նրա ուսումնասիրությունից ստացված արդյունքների ներկայացման միասնական նշանային համակարգ: Ստեղծված են ամենատարբեր տեսակի և բնույթի նշանային համակարգեր: Այնպես որ այս ամենից զլուխ հանելը այնքան էլ հեշտ գործ չէ: Դրության մասն վիճակի գոյությունը ինքնին հասկանալի է: Այն կապված է ուսումնասիրվող երևույթի դժվարամատչելիության հետ: Եթե լեզվական շատ բաղադրիչների ուսումնասիրությունը, ասենք՝ ձևաբանությունը, բառերիցը, բառակապակցություններիցը և նախադասություններիցը ավելի շոշափելի

բնույթի են և համեմատաբար շատ ավելի հեշտ, ապա հնչերանգի դեպքում գործը շատ ավելի դժվար է ու բարդ: Ամեն մի խոսող բնագոյաբար տիրապետում է հնչերանգային բոլոր օրենքներին և նրբերանգներին ու անհրաժեշտության դեպքում շատ ճիշտ է ընտրում հնչերանգային անհրաժեշտ տարբերակը: Եթե մենք խոսողին խնդրենք այն նորից վերարտադրել նույն նրբերանգով, նույն իմաստով, երբեք չի կարող: Հաղորդակցական գործընթացում խոսողի անգիտակցական ուղիորդ, հնչերանգային անհրաժեշտ տարբերակը կիրառելիս, գործում է անխափան և շատ ճիշտ: Իսկ երբ նրան փորձում ենք գիտակցել տալ անհրաժեշտ տարբերակի ընտրությունը, գործն անհամեմատ դժվարանում է: Իսկ թե որքան դժվար է ուսումնասիրողի գործը, այդ հասկանալիորեն բացատրության կարիք չի զգում: Դե եկ ու առանձնացրու հնչերանգային անհրաժեշտ տարբերակները, որոշիր տոների սահմանային այն անցումները, որոնց շնորհիվ առաջանում է հաղորդակցական, իմաստային, հուզական և նրբերանգային այդ բազմաբանակ տարբերակվածությունը: Եվ պատահական չէ, որ ամենափորձված հետազոտողն անգամ, հնչերանգն ուսումնասիրելիս, բույլ է տալիս շատ կոպիտ վրիպումներ:

Բացի նշված բնական դժվարություններից, հնչերանգն ուսումնասիրելիս, ծագում են նաև մի շարք այլ կարգի դժվարություններ, որոնք կապված են հետազոտության ընթացքի հետ: Հետազոտողի առջև կանգնում են այնպիսի դժվարություններ, ինչպես՝ հնչերանգի ըմբռնումը՝ նրա բաղադրիչների առանձնացումը, հնչերանգի և քերականական համակարգի փոխհարաբերությունը, հնչերանգի արտահայտման ճիշտ նշանային համակարգի ընտրությունը, հնչերանգի ուսումնասիրման ճիշտ մեթոդիկայի ընտրությունը, հնչերանգի ուսումնասիրման համար անհրաժեշտ շարահյուսական միավորների ընտրությունը, հնչերանգի և լեզվա-նճական տարրերի դրսևորումների փոխհարաբերությունը, հնչերանգի և շեշտի, ուղիղի, տեմպի փոխհարաբերությունը և այլն, և այլն:

Տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են մոտեցել հնչերանգի ուսումնասիրությանը և տարբեր կերպ են հասկացել նրա էությունը: Ընդհանուր առմամբ, հնչերանգի ըմբռնման մեջ կա երկու ուղղություն: Առաջին ուղղության ներկայացուցիչները հնչերանգի տակ հասկանում են միայն մեղեդու փոփոխությունը. այսպիսին է հիմնականում ամերիկյան և անգլիական լեզվաբանների մոտեցումը¹:

Երկրորդ ուղղության ներկայացուցիչները հնչերանգը դիտում են որպես ավելի բարդ երևույթ, որը բաղկացած է ձայնի հիմնական տոնից, ուժգնությունից, տևողությունից, դադարից, տեմպից, շեշտից և այլն, այսպիսին է խորհրդային լեզվաբանների մոտեցումը:

Ամերիկյան կառուցվածքաբաններից առաջինը Փայքն էր, որը ծրագրված ձևով ուսումնասիրեց ամերիկյան անգլերենի հնչերանգը: Նա ոչ միայն ուսումնասիրել ու գնահատել է մինչև ինքը եղած աշխատությունները և տեսությունները, այլև գիտականորեն հետազոտել լեզվի վերհատության հատկությունները՝ ուղիղ, դադար, տևողություն, շեշտ, մեղեդին և այլն: Փայքը հնչերանգը ուսումնասիրում է ըստ տոնի բարձրության աստիճանների և գտնում է, որ բարձրության այդ աստիճանները ունեն հնչույթային արժեք. «Անգլերենում կարելի է առանձնացնել իմաստակիր տոնի չորս բարձրություններ (տոնային հնչույթներ), որոնք հանդես են գալիս որպես հնչերանգային կոնտուրների ձևավորման հիմնաքարեր»²:

Փայքի այս մոտեցմանն այժմ հակադրվում է կոնտուրային մոտեցումը, որը հնչերանգը ներկայացնում է ըստ հնչադասության ամբողջական կոնտուրների:

Հնչերանգի ուսումնասիրության մեջ զգալի առաջընթաց էր Թրեյգերի և Սմիթի «Անգլերենի կառուցվածքի ուրվագիծ» աշխատությունը³, որի գլխավոր դրույթները հիմնված են Փայքի տեսության վրա, սակայն աշխատության հեղինակները շատ կողմերով են պարզեցրել հնչերանգի տեսությունը (շեշտի ուսումնասիրությունը, հիմնական տոնի մի շարք յուրահատկությունները և այլն): Հնչերանգի արտահայտման թվային եղանակը նույնպես վերցված է Փայքից, միայն հակառակ դասավորությամբ:

Հակառակ ամերիկյան մի շարք լեզվաբանների (Վ. Յասսեն, Ռ. Քինգդոն, Ռ. Սթրոուել և այլն)

¹ Տե՛ս *L. Armstrong and J. Ward, A Handbook of English Intonation, Cambridge, 1926; D. Jones, An Outline of English Phonetics, London, 1932; W. Jassem, Intonation of Conversational English, Wrocław, 1952; G. L. Trager and H. L. Smith, An Outline of English Structure, Washington, 1957; R. Kingdon, The Groundwork of English Intonation, London, 1958; D. Bolinger, A Theory of Pitch Accent in English «Word», vol. 14, 1958; R. Stockwell, The Place of Intonation in Generative Grammar, «Language», vol. 36, N 3, Part 1, 1960; I. O'Connor and G. F. Arnold, Intonation of Colloquial English, London, 1961; Ph. Liberman, On the Acoustic Basis of the Perception of Intonation by Linguists, «Word», vol. 21, 1965; M. A. K. Halliday, Intonation and Grammar in British English, The Hague-Paris, 1967; D. Crystal, Prosodic Systems and Intonation in English, Cambridge, 1969.*

² Տե՛ս *K. L. Pike, նշվ. աշխ., էջ 25:*

³ *G. Trager and H. Smith, նշվ. աշխ.:*

համակարգերը, որտեղ շեշտը և տոնը դիտվում են որպես փոխկապակցված միավորներ, Թրեյզերը և Սմիթը դիտում են դրանց միմյանցից բոլորովին անկախ. շեշտը միմյանցից տարբերում է որոշակի ձևությամբ խմբերը, իսկ տոնը նշում է, թե որտեղ է սկսվում կամ ավարտվում հնչադասությունը:

Ինչպես Փայքի, այնպես էլ Թրեյզերի և Սմիթի ու շատերի հնչերանգի ուսումնասիրությունը հիմնված է ինքնադիտման կամ էլ իրենց կամ ուրիշների կողմից ընթերցված խոսքի ուսումնասիրության վրա: Ընդ որում նրանք շատ կարևոր տեղ են տալիս լսողական վերլուծությանը: Փայքը մինչև անգամ նշում է, որ հնչերանգի հնչությամբ մեկնաբանման միակ ճիշտ միջոցը լսողական վերլուծությունն է: Այսպիսի մոտեցմանը հակադրվում են շատ լեզվաբաններ՝ հատկապես Բոլինգերը, Լիբերմանը, Լեիխտեն և Պետերսոնը⁴, որոնք գտնում են, որ հնչերանգի ուսումնասիրության մեջ կարելի է հաջողությունների հասնել միայն փորձառական եղանակով՝ ժամանակակից սարքերի օգտագործմամբ:

Հնչերանգի ուսումնասիրության մեջ նկատելի ծառայություն է մատուցել նաև Բոլինգերը: Նա կատարել է բազմաթիվ գիտական հետազոտություններ նվիրված շեշտին, ուժգնությանը, դիֆմին, տոնին, սրանց և զանազան լեզվական միավորների ու հասկացությունների փոխհարաբերությանը և այլն⁵:

Բոլինգերը որպես հնչերանգային միավոր վերցնում է տոնի շարժման ուղղությունը և ուսումնասիրում է նրա ազդեցությունը նախադասության շեշտված և անշեշտ մասերի վրա: Նա լուրջ ուշադրություն է դարձնում արտասանվածքի անշեշտ վանկերի ուսումնասիրությանը: Հնչերանգի վերաբերյալ իր աշխատանքները Բոլինգերը ամբողջացնում է «Հնչերանգը և իր մասերը» աշխատության մեջ⁶, ուր նա համագամայինք քննում է հնչերանգի առանձնահատկությունները՝ հնչերանգի և շեշտի, հնչերանգի և դիֆմի, հնչերանգի և դադարի, հնչերանգի և ձայնավորների, հնչերանգի և վանկերի, հնչերանգի և քերականության, հնչերանգի և հոգեբանության, հնչերանգի և երաժշտության, հնչերանգի և ժեստերի փոխհարաբերությունները:

Բրիտանական դպրոցի մեջ ավելի աչքի ընկնող տեղ է զբաղվում Դ. Քրիստալը⁷: Նրա տեսությունը տալիս է բրիտանական դպրոցի սինթեզված և տիպական պատկերը: Քրիստալը լուրջ մեկնաբանության է ենթարկում միջուկ, մեղեդի և տոնային խմբեր հասկացությունները: Նա տարբերակում է միջուկային տոնի պարզ, բարդ և բաղադրյալ տեսակներ և մանրամասն ուսումնասիրում է դրանց կառուցվածքը: Հնչերանգի տակ Քրիստալը հասկանում է տոնի, ձայնի դիապազոնի (pitch range), ուժգնության, դիֆմի և տևողության ամբողջությունը: Ինչպես տեսնում ենք, Քրիստալի մոտեցումը բոլորովին տարբեր է ամերիկյան ու բրիտանական դպրոցների մյուս ներկայացուցիչների մոտեցումից և ավելի մոտ է խորհրդային դպրոցի ներկայացուցիչների տեսակետին, այսինքն՝ հնչերանգը դիտում է որպես բարդ և տարբեր բաղադրիչներից կազմված մի ամբողջություն:

Խորհրդային լեզվաբանները հնչերանգը դիտում են բարդ, տարբեր միավորներից կազմված կառուցվածքային ամբողջություն, այդ իսկ պատճառով այսպիսի մոտեցման դեպքում չկա տեսակետների միասնականություն: Նրանք հնչերանգը դիտարկում են և՛ հնչյունական, և՛ լեզվական տեսանկյուններից: Հ. Աճառյանը հնչերանգը (եկ էջ) բնորոշում է որպես ձայնի բարձրության փոփոխություն⁸: Նույն տեղում նա մանրամասն քննում է նաև ուժգնություն, տևողություն, շեշտ, դիֆմ և դադար հասկացությունները, որոնք հիմք են տալիս մտածելու, որ նա նշված հասկացությունները մույնպես մտցնում է հնչերանգի մեջ: Հ. Աճառյանը առանձնացնում է տոնի չորս տեսակ՝ հավասար, իջնող, բարձրացող և բարդ: Բարդերը կազմված են առաջին երեքի տարբեր համախմբություններից:

Մ. Աբեդյանը հնչերանգի բաղկացուցիչ տարրեր է համարում չորսը՝ ձայնի բարձրությունը, ուժգնությունը, տևողությունը և շեշտը⁹:

Առաջ տանելով Հր. Աճառյանի տեսակետը՝ Էդ. Աղայանը առանձնացնում է շեշտի (որի տակ հավանաբար հասկանում է տոնը) յոթ տեսակ՝ հասարակ, սուր, հարցական, բարձրացող, իջնող, իջնող-բարձրացող և բարձրացող-իջնող¹⁰: Այստեղ քիչ անհասկանալի է, թե ինչ հիմունքով է Էդ. Աղայանը առանձնացրել նշված շեշտատեսակները և մասնավորաբար սուր, հարցական ու բարձրացող

⁴ D. Bolinger, նշվ. աշխ., 1958; Ph. Liberman, նշվ. աշխ., 1965; I. Lehiste, Suprasegmentals, Cambridge, Massachusetts and London, 1970; I. Lehiste and G. E. Peterson, Some Basic Considerations in Analysis of Intonation, «The Journal of the Acoustical Society of America», vol. 33, N 4, 1961.

⁵ D. Bolinger, նշվ. աշխ., 1958, նաև՝ Contrastive Accent and Contrastive Stress, «Language», vol. 37, 1961; Pitch Accent and Sentence Rhythm, «Form of English», Cambridge, 1965.

⁶ D. Bolinger, Intonation and its Parts, Stanford University Press, Stanford, 1986.

⁷ Տե՛ս D. Crystal, նշվ. աշխ., 1969:

⁸ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1964, էջ 283-357:

⁹ Մ. Աբեդյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1971, էջ 97:

¹⁰ Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 271-283:

տոները, որովհետև սկզբունքորեն դրանք իրարից համարյա ոչնչով չեն տարբերվում: Վերևում թվարկած շեշտերից վերջին չորսին նա անվանում է հուզական ելևէջներ, քանի որ դրանք արտահայտում են խոսողի գամագան հուզական վիճակները: Այսպիսի մոտեցումը եղելության իրական պատկերը չի ներկայացնում, որովհետև իջնող-բարձրացող, բարձրացող, իջնող, և, այսպես ասած, հարցական տոները բացի հուզական երանգ ունեցող հնչադասություններից հատուկ են նաև պատմողական, հարցական և բացականչական շատ տեսակի ու ենթատեսակի տոնային կառույցների:

Եղ. Ադայանը հնչերանգ ասելով հասկանում է ձայնի բարձրություն, ուժգնություն, տևողություն, շեշտի և դադարի ամբողջությունը: Նա հատկապես ընդգծում է հնչերանգի՝ իբրև քերականական արտահայտման միջոցի կարևորությունը՝, իսկ Գ. Ջահուկյանը՝ երեքը՝ հիմնական տոնի բարձրությունը, ուժգնությունը և տևողությունը:՝ Նշենք, որ հնչերանգ տերմինը առաջին անգամ օգտագործել է Վ. Առաքելյանը՝:

Ինչպես տեսանք, հնչերանգի բնութագրման մեջ շեշտին կարևորություն են տալիս շատ լեզվաբաններ, որովհետև շեշտը էական դեր է կատարում բառի և նախադասության հնչերանգի ձևավորման գործում: Հայերենի բառային շեշտի ուսումնասիրությամբ զբաղվել է Ռ. Թոխմախյանը՝: Փորձառական տվյալներից ելնելով՝ հեղինակը պնդում է հայերենի բառային շեշտի ուժգնային լինելու ավանդական դրույթը: Նա գտնում է, որ հայերենի բառային շեշտի ձև ավորման գործում վերահատույթային հատկություններից հիմնական դերը պատկանում է ուժգնությանը:

Հայերենի հնչերանգի ուսումնասիրության գործում զգալի նվաճում էր ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի կողմից 1978 թվին հրատարակված «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում» աշխատությունների ժողովածուն: Այս աշխատանքները կատարված են փորձառական եղանակով: Ա. Արամյանը հետազոտել է պատմողական և հրամայական նախադասությունների հնչերանգը, Ս. Ղուկասյանը՝ հարցական նախադասություններինը, Ա. Խաչատրյանը՝ բացականչական նախադասություններինը, իսկ Ռ. Թոխմախյանը՝ հայերենի շարութային շեշտի առանձնահատկությունները:

Իսկ օտար հեղինակներից Տրուբեցկոյը հնչերանգը բնութագրում է որպես հիմնական տոնի, ռիթմի և շեշտի ամբողջություն՝, Պելչուկսկին՝ հիմնական տոնի բարձրության, տենքրի, դադարի, շեշտի և ռիթմի՝, իսկ Տորսուևը վերջինիս բնութագրման մեջ ավելացնում է նաև տենպ հասկացությունը՝: Արտյոմովը հնչերանգի տակ հասկանում է հիմնական տոնի բարձրության, ուժգնության, տենքրի, դադարի և շեշտի միասնությունը՝, իսկ Զինդերը՝ միայն հիմնական տոնի բարձրության, դադարի և շեշտի՝:

Հնչերանգի՝ իրենց սահմանման մեջ հիմնական տոնի բարձրությունը, ուժգնությունը և տևողությունը ընդունում են շատ լեզվաբաններ, միայն այս կամ այն բաղադրյալները ավելացնելով (շեշտ, տենքր, դադար և այլն) (Ե. Ա. Բրիգոլունովա, Օ. Ա. Նորկ, Տ. Մ. Նիկոլասևա)՝:

Հնչերանգը խոսքում կատարում է մի շարք գործառնություններ: Հնչերանգի ամենաառաջին և հիմնական գործառնությունը բառերը (դրանով իսկ՝ հնչյունները) հնչադասության կազմում համախմբելն է՝ հնչյուններին միասնական և փոխկապակցված հնչական տեսք տալը: Հնչերանգի միջոցով խոսքի հոսքը տրոհվում է նաև հնչադասությունների, որն անչափ կարևոր է խոսքը հստակ ըմբռնելու և հասկանալու համար: Հնչերանգի միջոցով է, որ հնչադասությունը բաժանվում է հնչաշարութային իմաստակիր հատվածների, որը, ինչպես և խոսքի եղանակավորումը հնչերանգի շատ կարևոր գործառնություններից է:

¹¹ Է. Ադայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 333:

¹² Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

¹³ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1958, էջ 26:

¹⁴ Ռ. Թ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1975:

¹⁵ И. С. Трубейской, Основы фонологии, М.-Л., 1960.

¹⁶ А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1938.

¹⁷ Г. П. Торсуев, Вопросы акцентологии современного английского языка, М.-Л., 1960, с. 23.

¹⁸ В. А. Артемов, Коммуникативная, синтаксическая, логическая и модальная функции речевой интонации, «Материалы коллоквиума по экспериментальной фонетике и психологии речи», М., 1966.

¹⁹ Л. Р. Зиндер, Общая фонетика, Л., 1960, с. 286-292.

²⁰ О. А. Норк, Основные интонационные модели немецкого языка, «Иностранные языки в школе», № 3, 1964. Т. М. Николаева, Интонация сложного предложения в славянских языках, М., 1969, с. 36. Е. А. Брызгунова, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963, с. 158.

Վերջին տարիներն շատ հնչյունաբաններ են ուսումնասիրություն կատարում հնչերանգի եղանակավորային գործառության վերաբերյալ (Ն. Դ. Սվետազարովա, Ն. Ս. Տիսելկո և այլն)²¹:

Նշենք, որ մախադասության եղանակավորմանը անդրադարձել են խորհրդային շատ լեզվաբաններ (Գ. Բ. Ջահուկյան, 1974, Լ. Ս. Երնդլան, Գ. Պ. Լոնտև, Վ. Պ. Պանֆիլով, Ե. Ա. Ջվերև, 1983²² և այլն): Ընդհանուր առմամբ լեզվաբանները առանձնացնում են եղանակավորման երկու տեսակ՝ օբյեկտիվ եղանակավորում և սուբյեկտիվ եղանակավորում: Պետք է նշել, որ այսպիսի տարբերակման հիմքում անգամ չկա տեսակետների նույնակամություն: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ օբյեկտիվ եղանակավորման հիմքում ընկած են այն իմաստները, որոնք գործում են անկախ հաղորդակցման գործընթացից, իսկ սուբյեկտիվ եղանակավորումը պայմանավորված է խոսողի վերաբերմունքից, գնահատականից այն բանի նկատմամբ, ինչ արտահայտված է հաղորդման մեջ:

Հնչերանգի ամենակարևոր գործառություններից է մախադասության հաղորդակցական տիպերի տարբերակումը, այսինքն՝ միևնույն շարահյուսական կառուցվածքն ունեցող հնչադասությունը միայն հնչերանգի փոփոխման միջոցով դառնում է մեկ պատմողական, մեկ հարցական, մեկ բացականչական: Հնչերանգի միջոցով է նաև, որ խոսքի տվյալ հատվածը բնութագրվում է ավարտային, կամ ոչ ավարտային շարությամբ: Հնչերանգի միջոցով է նաև, որ մեկը մյուսին հաջորդող հնչադասությունները կապվում են միմյանց հետ: Վերջապես հնչերանգի կարևոր գործառություններից մեկը նաև խոսողի զանազան հուզական և զգացական հոգեվիճակների արտահայտումն է: Նշենք, որ ժամանակակից լեզվաբանության մեջ շատ հնչյունաբաններ են շեշտում հնչերանգի հուզատարբերակիչ գործառությունը (Ե. Վ. Գորդինա, Լ. Ռ. Ջինդեր, Ն. Դ. Սվետազարովա և այլն)²³:

Նշենք նաև, որ մի շարք դեպքերում հնչերանգի հուզա-զգացական գործառությունը նույնացնում են նրա եղանակավորային գործառության հետ (Լ. Ռ. Ջինդեր, Ա. Մ. Անտիպովա)²⁴:

Մեկ այլ տեսակետի համաձայն, որի հեղինակը Ս. Մ. Նիկոլան է, հնչերանգի հուզա-զգացական գործառությունը լեզվաբանության ուսումնասիրության ոլորտից դուրս է մղվում, որովհետև հուզականության միջոցով արտահայտվում են ոչ թե բուն լեզվական հարաբերություններ, այլ խոսողի վերաբերմունքը հաղորդման նկատմամբ²⁵:

Վերջին ժամանակներս հատկապես խորհրդային հնչյունաբանները լուրջ ուշադրություն են դարձնում տարբեր լեզուների կամ էլ միևնույն լեզվի գրական տարբերակների հնչերանգների զուգարական քննությանը: Անգլերենի տարբերակների՝ բրիտանական անգլերենի, ամերիկյան անգլերենի, կանադական անգլերենի և ավստրալիական անգլերենի այդպիսի ուսումնասիրություն է կատարել Ջ. Շախբազովան. ընդ որում նա զուգադրությունը կատարել է հնչյունաբանական բոլոր մակարդակներում²⁶: Հարուստ փաստական նյութի վրա հիմնված և մանրակրկիտ վերլուծությամբ, Ջ. Շախբազովան ցույց է տալիս, թե հատույթային (հնչյունական) և վերհատույթային (շեշտ, հնչերանգ) միավորներից որոնք են, որ այս տարբերակներում մնում են անփոփոխ և որոնք են, որ ենթարկվում են փոփոխության. ընդ որում ուսումնասիրությունը կատարում է համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքներում: Մասնավորապես նա նշում է, որ ի տարբերություն բրիտանական ընդունված արտասանության (received pronunciation), մյուս տարբերակները աչքի են ընկնում ավելի մոնոտոն արտասանությամբ: Նա ուսումնասիրում և առանձնացնում է հնչյունական, շեշտային և հնչերանգային այն կառուցված-

²¹ Н. Д. Светозарева, Интонационная система русского языка, Л., 1982; Н. С. Тиселько, Интонация как средство выражения субъективной модальности в немецкой диалогической речи. Дис. канд. филол. наук, М., 1987.

²² Գ. Բ. Ջահուկյան, տե՛ս նշվ. աշխ., Լ. Ս. Ермолаева, Система средств выражения модальности в современных германских языках (на материале немецкого, английского, шведского, исландского языков). Дис. канд. филол. наук, М., 1962; Т. П. Ломтев, Предложение и его грамматические категории, М., МГУ, 1972, с. 199; В. З. Панфилов, Категория модальности и ее роль в конституировании структуры предложения и суждения. "Вопросы языкознания", М., 1977, N 4; Е. А. Зверева, Научная речь и модальность: система английского глагола, Л., 1987.

²³ М. В. Гордина, Фонетика французского языка, Л., 1973; А. М. Антипова, Система английской речевой интонации. Учебное пособие для вузов. М., Высшая школа, 1979; Л. Р. Зиндер, Предисловие к книге "Интонация". Киев, Высшая школа, 1978; Н. Д. Светозарева, Интонационная система русского языка, Л., 1982.

²⁴ Л. Р. Зиндер, Предисловие к книге "Интонация". Киев, 1978.

²⁵ Т. М. Николаева, Фразовая интонация славянских языков, М., 1977.

²⁶ Д. А. Шахбагова, Фонетическая система английского литературного языка - целостность, устойчивость, вариативность, дис. д-ра филол. наук, М., 1986.

քային խմբերը, որոնք կայուն, անփոփոխ են չորս տարբերակների համար էլ: Հնչերանգային կառուցվածքներից իրենց կայունությամբ հատկապես բնութագրական են ճախավերջնային (предтерминальный), վերջնային (терминальный) կորերը, հնչադասային (фразовой) շեշտի որոշ տեսակները, տոնի մակարդակները, ռիթմական կազմակերպվածությունը (ритмическая организация) և տեմպը:

Անգլերենի այս չորս տարբերակների՝ արդեն միայն հնչերանգների ավելի խորացված զուգադրություն է կատարում Ե. Ֆենսկոն²⁷: Նա ուսումնասիրությունը կատարում է հիմնականում ըստ տոնի բարձրության մակարդակների և մեղեդիական կորագծի. ընդ որում մեղեդիական կորագծի քննությունը կատարում է ըստ նրա առանձին հատվածների՝ շեշտավանկի (такт)՝ հնչադասության առաջին շեշտված վանկի, մախաշեշտավանկի (предтакт)՝ դրան նախորդող հատվածի՝ վերջնային տոնի (терминальный тон)՝ հնչադասության վերջին շեշտված վանկի և մախավերջնային տոնի (акцента)՝ շեշտավանկից հետո մինչև վերջին շեշտված վանկը ընկած հատվածը: Այս չորսից նա առավել կարևորություն է տալիս վերջնային տոնին՝ նշելով, որ վերջնային տոնի իջնող և բարձրացող շարժումը բնութագրական է չորս տարբերակների համար էլ ու նրանց հնչերանգի կայուն հատկանիշներից է: Հետևելով Բոլդինգերին և Դելատրին՝ նա նշում է, որ ընդհանրական ամերիկերենի (general American) վերջնային տոնի պարտադիր հատկանիշներից մեկը բարձրության մի մակարդակից մյուսին աստիճանաձև անցումն է, իսկ բրիտանական ընդունված արտասանությունում այդ անցումը կատարվում է սահուն ձևով: Պետք է ասել, որ Ֆենսկոն, տոնի շարժման այս նկարագրությունները կատարելիս, չի նշում, թե ինչպիսի մախադասության (պատմողական, հարցական, հրամայական) մասին է խոսքը: Մնում է ենթադրել, որ այս բոլոր հնչադասությունների դեպքում էլ մեք գործ ունենք տոնի միատեսակ շարժումների հետ:

Խորհրդային լեզվաբանները հնչերանգը քննում են լեզվական զանազան հասկացությունների հետ փոխկապակցված: Արտյոմովը գտնում է, որ հնչերանգը ունի հաղորդակցային, շարահյուսական, իմաստային և զգացական նշանակություն: Նորկը առանձնացնում է հնչերանգի երկու հիմնական իմաստ՝ զգացական և շարահյուսական: Ինչպես Արտյոմովը, այնպես էլ ուրիշ շատ խորհրդային լեզվաբաններ շեշտում են հատկապես հնչերանգի հաղորդակցական արժեքը. այն, որ հնչերանգը հաղորդակցական գործընթացի լեզվական միջոցներից մեկն է: Հնչերանգի և շարահյուսության իմաստային կողմի փոխհարաբերության վրա առանձնապես ուշադրություն է դարձնում Բրիզգունովան, որը հանգամանալից քննում է ինչպես ուսերենի շարութային համակարգը, այնպես էլ հնչերանգի և շարութաշեշտի փոխհարաբերությունը²⁸: Նա տարբեր շարութային համակարգերը ուսումնասիրելու համար առանձնացնում է շարութաշեշտի առաջին, երկրորդ և երրորդ տեսակներ և գտնում է, որ ուսերենում կա հինգ հնչերանգային կոնտուր՝ UK-1, UK-2, UK-3, UK-4, UK-5:

Հնչերանգի և առոգանության (просодический) պլանների փոխհարաբերության և փոխալայնաձևավորվածության հարցերը ուսումնասիրված են Լ. Բոլխինայի կողմից²⁹: Նա նշում է, որ առոգանությունները կարելի է որոշել միայն վանկի և վանկերի շղթաների ուղեֆի վերաբերյալ, ընդ որում առոգանության հատկություններ ունեն միայն այն հնչյունները, որոնք կազմում են վանկի գագաթը:

Բոլխինան առոգանությունների հիմնական գործառությունն է համարում խոսքի ավելի փոքր միավորները ավելի մեծ միավորների հետ գոյելը (վանկերը՝ հնչաբառերի, հնչաբառերը՝ հնչաշարությունների, հնչաշարությունները՝ հնչադասությունների) և այդ միավորների միջև եղած սահմանների ազդանշումը: Չողման հիմքում ընկած է վանկերից մեկի առանձնացումը որպես առաջատարի (այդպիսին է սովորաբար շեշտվածը), իսկ մյուսները՝ անշեշտները, համախմբվում են նրա շուրջը: Լ. Բոլխինան և Ռ. Պատապովան առանձնացնում են վերհատության հատկությունների երկու մակարդակ. առոգանության և հնչերանգային³⁰: Բոլխինան նշում է, որ հնչադասության հնչերանգային ձևավորման գործում որպես գլխավոր վերհատության հատկություն հանդես է գալիս հիմնական տոնի համախախտությունը: Հնչադասության մեջ առոգանությունները և հնչերանգը գործում են միմյանց հետ սերտ կապված և կա-

²⁷ Е. А. Фесенко, Константные и вариативные признаки акцентно-мелодической структуры в интонационной системе английского языка (на материале национальных вариантов английского языка), дис. канд. филол. наук, М., 1987.

²⁸ Е. А. Брызгунова, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963.

²⁹ Л. П. Блохина, Роль супrasegmentных характеристик в языке и речи, "Звуки, слоговой акцент, интонация", материалы коллоквиума по экспериментальной фонетике и психологии речи, т. 5, Вильнюс, 1972, с. 137-145.

³⁰ Л. П. Блохина и Р. К. Потапова, Просодические характеристики речи, М., 1970.

որոշ են առանձնացվել որոշակի ուսումնասիրության դեպքում միայն:

Հնչերանգի ուսումնասիրության մեջ կարևոր տեղ է գրավում նաև հնչերանգության (ИНТОНЕМА) առանձնացման և հետազոտության հարցը: Խորհրդային լեզվաբանության մեջ հնչերանգության գաղափարը առաջին անգամ բարձրացվել է Վ. Ա. Արտյոմովի և Օ. Ա. Նորկի կողմից³¹: Հնչերանգության տարբերակման համար նրանք հիմք են ընդունում ձայնի հիմնական տոնի հաճախականության, տևողության և տեմպի այն որոշակի դրսևորումները, որոնք իմաստի տարբերակում են առաջացնում: Այս հատկությունները նրանք վերցնում են ոչ թե բացարձակ, այլ հարաբերական արժեքներով:

Ընդհանրապես հնչերանգության անբերի տարբերակման, խմբավորման և համակարգման հարցը բավականին դժվար գործ է, որովհետև միևնույն հնչերանգային կոնտուրը տարբեր իրադրություններում կարող է ծառայել տարբեր հաղորդակցային միավորների (Բոլինջեր, Պլայնր և այլն), իսկ այս դեպքում արդեն բարձրանում է տարբեր իրադրությունների առանձնացման հարցը, որը, թերևս, ավելի բարդ գործ է:

Այն, որ Հալլիդեյը փորձում է առանձնացնել անգլերենի հնչերանգի «ընդհանուր իմաստները», կատարել անգլերենի հնչերանգային կոնտուրների խմբավորում և սիստեմավորված դասակարգում՝ լուրջ քննադատության է ենթարկվում Դ. Ջրիստալի կողմից³²: Ջրիստալը գտնում է, որ անհնար է ոչ միայն հնչերանգը առանձին ուսումնասիրել, այլև ցույց տալ, թե ինչպես են հնչերանգային տարբեր հատկությունների արժեքները փոխվում, որովհետև նրանց միջև չկա լիարժեք գույակելի համագործակցություն:

Հնչերանգի ըմբռնումը քննարկելիս՝ տեսանք, որ այդ հարցում լեզվաբանների մոտեցումը միմյանցից շատ տարբեր է: Նույնիսկ նրանք, ովքեր հնչերանգը դիտարկում են որպես կառուցվածքային մի ամբողջություն, գտնում են, որ հնչերանգի մեջ բաղադրիչների տարբեր քանակություն է մտնում (հիմնական տոնի բարձրություն, ուժգնություն, տևողություն, տեմպ, շեշտ, ուժ, դադար, տեմպ): Այժմ տեսնենք, թե այս նշված միավորներից որոնք են, որ, իրոք, հնչերանգի մաս են կազմում: Մեր հաստատ համոզմամբ հնչերանգը իր հիմնական ձևավորումը ստանում է առաջին երեքի, այսինքն՝ հիմնական տոնի բարձրության, ուժգնության և տևողության միասնական դրսևորմամբ: Այս տեսակետից միանգամայն համամիտ չենք այն լեզվաբանների հետ, ովքեր ուժգնությունը և տևողությունը հնչերանգի բաղադրիչ չեն համարում և հնչերանգը դիտում են միայն մեղեդու փոփոխություն: Երանգը (տեմպը) նույնպես հնչերանգի անհրաժեշտ բաղադրիչների մեջ է մտնում, որովհետև երանգի միջոցով են հնչերանգի մեջ արտահայտություն ստանում հուզական և կամային տարբեր դրսևորումները, ինչպես նաև մարդկային տարբեր ձայներն ու տարիքային տարբեր ձայնիարացումները:

Մենք համամիտ չենք նաև այն լեզվաբանների հետ, ովքեր շեշտը, ուժը, դադարը և տեմպը մտնում են հնչերանգի բաղադրիչների մեջ: Ահա թե ինչու: Շեշտը հնչերանգից կտրված առանձին հանդես չի գալիս և իր ձևավորումը ստանում է հիմնական տոնի բարձրության, ուժգնության և տևողության միջոցով, ինչպես և հնչերանգը: Փաստորեն շեշտը հնչադասության որևէ հատվածն է, որն ընդգծվում է հնչերանգի միջոցով, հնչերանգի անմիջական բաղադրիչներ կազմող հիմնական տոնի բարձրության, ուժգնության և տևողության միջոցով՝ տարբեր փոխհարաբերություններով: Այդ հատվածները մենք պայմանականորեն ենք շեշտ անվանում՝ ելնելով ուսումնասիրության և ուսուցման առանձնահատկություններից: Ի տարբերություն Ռ. Թոխմախյանի, մենք գտնում ենք (ելնելով մեր կատարած փորձերի տվյալներից), որ գրական հայերենում շեշտի ձևավորման գործում կարևոր դեր է կատարում ոչ թե ուժգնությունը, այլ հիմնական տոնի բարձրությունը:

Ռիթմը նույնպես հնչերանգի բաղադրիչ չէ, որովհետև մենք տվյալ հնչադասության ուժի մասին կարող ենք խոսել միայն այն ժամանակ, երբ մեր ձեռքի տակ ունենք նրա հնչերանգը: Ընդհանրապես ուժի միևնույն երևույթի պարբերաբար հաջորդական կրկնությունն է: Ռիթմը հատուկ է բնության բոլոր երևույթներին (բույսերի աճ, երկրի և մոլորակների պտույտ և այլն) ու արվեստի բոլոր ձևերին (ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն և այլն): Ռիթմով օժտված է նաև մարդու սրտի աշխատանքը, շնչառությունը, քայլվածքը և այլն: Բավական է, որ արվեստի տվյալ ստեղծագործության մեջ խախտվի ուժի մասին համաչափությունը, ու այն կկորցնի իր գեղագիտական արժեքը և

³¹ В. А. Артемов, Об интонеми, Тезисы доклада на конференции по структурной лингвистике, посвященной базисным проблемам фонологии, М., 1963; Об интонеми и интонационном инварианте. Сб. «Интонация и звуковой состав», М., 1965; О. А. Норк, Основные интонационные модели немецкого языка, «Иностранные языки в школе», 1964, № 3.

³² D. Crystal, A review of «Intonation and Grammar in British English» (M. A. K. Halliday, The Hague, 1967), Language, vol. 45, N 2, 1969.

մարդկանց կողմից հաճույքով չի ընկալվի: Լեզվի մեջ ուրիշը շեշտված և անշեշտ վանկերի որոշակի հաջորդականությունն է, որը լեզվից լեզու շատ տարբեր է: Եթե ուրիշը շեշտված և անշեշտ վանկերի փոխհարաբերությունն է, ապա, բնականաբար, այն հնչերանգի բաղադրիչ լինել չի կարող: Եվ, իրոք, ուրիշը մասին խոսք կարող է լինել միայն այն դեպքում, երբ մեր ձեռքի տակ արդեն ունենք տվյալ հնչադասության կամ հնչադասությունների հնչերանգը: Հետևաբար ուրիշը այնպիսի մի հասկացություն է, միջոց, որով բնութագրվում է հնչերանգը, դրանով իսկ կենդանի խոսքը՝ ուրույն տեսանկյունից:

Այս կերպ նույնպես և դադարը հնչերանգի բաղադրիչ չէ, որովհետև երբ ավելի հիմնավոր ենք այն դիտարկում, ապա նկատում ենք, որ այն կատարում է միանգամայն այլ լեզվական դեր: Դադարը հնչերանգի բաղադրիչ չէ այն պարզ պատճառով, որ ուր առկա է դադար, այնտեղ բացակայում է ամեն մի շարժում, ամեն մի ֆիզիկական երևույթի գործունեություն, հետևաբար այնտեղ չկա և ոչ մի հնչերանգ: Հավանաբար այն լեզվաբանները, ովքեր դադարը հնչերանգի բաղադրիչ են համարում, ելնում են այն փաստից, որ միևնույն բառային կազմով հնչադասության մեջ տարբեր դադարներ կիրառելով ստանում ենք տարբեր իմաստներ, ինչպես՝ «Կախել պետք չէ, ներել» և «Կախել, պետք չէ ներել»: Եթե դադարը լիներ հնչերանգի բաղադրիչ, ապա այն անհրաժեշտաբար պետք է մասնակցեր բոլոր հնչադասությունների հնչերանգների ձևավորմանը: Այնպիսի հնչադասություններում, ինչպիսիք են հետևյալները՝ «Դրսում բարակ անձրև է մաղում» և «Երեխան սիրով խաղում է շնիկի հետ», դադարը ոչ մի մասնակցություն չի բերում դրանց հնչերանգների ձևավորման գործին: Փաստորեն դադարը հանդես է գալիս որպես հնչերանգին հավասարագոր երևույթ: Լեզվական համակարգի ներսում դադարը և հնչերանգը իրենց գործառույթով իրար հավասար են ու մեկը մյուսի նկատմամբ ստորադաս դիրք չեն գրավում: Ճիշտ է, խոսելիս մենք հաճախ ենք օգտվում դադարից՝ մեր խոսքին զանազան իմաստներ, նրբերանգներ և արտահայտչակազմություն հաղորդելու նպատակով: Դադարից հատկապես օգտվում են բարդ մախադասություններ կիրառելիս, որը և ակամայից դադարը հնչերանգի բաղադրիչ լինելու պատրանք է առաջացնում:

Որոշ լեզվաբաններ հնչերանգի բաղադրիչ են համարում նաև տեմպը: Տեմպը հնչերանգի փոփոխության արագությունն է, խոսքի արագությունը: Այն անմիջականորեն կապված է տևողության հասկացության հետ և պայմանավորված է նրանով: Տեմպը, փաստորեն, ցույց է տալիս, թե հնչերանգի մյուս բաղադրիչները՝ հիմնական տոնը և ուժգնությունը, ժամանակային ինչ տևողության ընթացքում են կատարում իրենց համապատասխան անհրաժեշտ փոփոխությունները: Տեմպը հնչերանգի բաղադրիչ չէ, այլ այնպիսի մի հասկացություն, որի միջոցով բնութագրվում է տոնային և ուժգնային շարժումը, փոփոխությունը կախված տևողության (ժամանակային) պարամետրից:

Ի մի բերելով հնչերանգի մասին բերված տեսակետները՝ մենք ընդունում ենք հնչերանգի հետևյալ ըմբռնումը, **հնչերանգը** հիմնական տոնի բարձրության, ուժգնության տևողության և երանգի ամբողջությունն է:

С. В. ГУКАСЯН- Некоторые понятия интонации в современном языкознании.- В статье представляются точки зрения зарубежных и армянских лингвистов относительно интонации. В основном существует два подхода к интонации: узкий, когда под интонацией понимается только изменение мелодики речи, таков подход американских и британских лингвистов, и общий, когда интонация трактуется как сложное явление, состоящее из основного тона, интенсивности и длительности-таков подход русских и армянских лингвистов.

Развивая точку зрения русских и армянских лингвистов, автор статьи под интонацией понимает совокупность частот основного тона, интенсивности, длительности и тембра.